№ 36 Փետրվարի 27 (Մարտի 11) 1881 Փետրվարի 27 (Մարտի 11) № 36

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ. կէս տարվանը 6 բուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Ստորագրողները դիմում են ուղղակի
Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կիրակեայ դպրոցներ։ — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Ս. Պետերբուրգից։ Նամակ Ցարսկոյէ Սելոյից։ Նամակ Իզմիրից։ Նամակ Գանձակից։ Նամակ Վաղարշապատից։ Նամակ Երեւանից։ Նորերին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Գերմանիա։ Թիւրքիա։ Ֆրանսիա։ Աւստրիին լուրեր։—ԻԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԿԻՐԱԿԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐ

—

«Մշակի» երէկվայ համարում ընթերցողը կարդացած կը լինի խմբագրին ուղղված պ. Ռաֆեանեանցի մի նամակ, որով պարոնը յայտնում է թէ կառավարութեան թոյլատրութեամբ բաց է անում Լուսաւորում կիրակեայ ձրիավարժ դպրոցը հասակ առած անպրագէտների համար։ Դպրոցը բոլորովին տարրական ուսման ընթացք կունենայ. այդտեղ հասակ առած, քսան տարեկանից սկսած մինչեւ քառասուն տարեկան մարդիկ կը սովորեն հայերէն կարդալ գրելը և ազգային ու եկեղեցական տօնների պատմութիւնը։

Լաւագոյն կը լինէր, մեր կարծիքով, այդ ուսման պրոգրամային տալացնել թւաբանութեան առաջին չորս գործողութիւնները։

Որքան օգտաւէտ են կիրակեայ դպրոցները մի ժողովրդի համար, որի տարրին դասակարգի մէջ տարածված չէ գրագիտութիւնը, ինքն իրան հասկանալի է։

Մեր հասարակութեան մէջ հաղարաւոր մարդիկ կան, մանաւանդ տարրին դասակարգին պատկանողները, որոնք երեխայութեան ժամանակ միջոց չունեցան յաճախել որ և է դպրոց, ուրեմն կառաբելապէս զուրկ մնացին ուսումից։ Այդ տեսակները, միջոց չունենալով մանուկ հասակում ուսում առնելու, երբ հասակ են առնում ստիպված են լինում իրանց օրական աշխատանքով իրանց ապրուստը ապահովել և այնուհետև, իրանց կեանքի ամբողջ ընթացքում, այլ ևս ոչինչ միջոց և ժամանակ չունեն առանալ որ և է, թէեւ, ամենատարրական ուսում։

Այդ տեսակների համար կիրակեայ վարժարանները լրացնում են այն ուսումը, որից նրանք իրանց մանուկ հասակում զուրկ մնացին անաջող հանգամանքների շնորհով։

Չէ կարելի չը համակրել պ. Ռաֆեանեանցի դիտաւորութեանը և ցանկալի է, որ պարոնը օգնողներ գտնի իր օգտաւէտ ձեռնարկութեան մէջ։

Կիրակեայ դպրոցների նպատակն է տարրին դասակարգի հասակ առած անպրագէտ մարդկանց տարրական գրել և հաշուել, և նոյնպէս ծանօթացնել կրօնի ամենատարրական ուսմունքների հետ, թէ կուզ եկեղեցական տօների կարճ բացատրութեան ձեւով։ Իսկ ազգային տօների բացատրութեան միջոցով ուսում առնողը անենկատելի կերպով կը ծանօթանայ իր մայրենի պատմութեան հետ։

Ահա կիրակեայ դպրոցների համառօտ պրոգրամը, առհասարակ, որ չը նայելով իր սահմանափակ և համառօտ լինելուն, եթէ խղճմտութեամբ կատարվի, սահմին օգուտներ կարող է տալ անպրագէտ դասակարգին, ահագին ծառայութիւն կարող է մատուցանել ժողովրդական լուսաւորութեան գործին։

Ի հարկէ դա գործի սկիզբն է և թիֆլիսի մի թաղի մէջ այդ տեսակ դպրոց բանական չէ մեր ամբողջ քաղաքի անպրագէտ ժողովրդի համար։ Ցանկալի է որ քաղաքիս իւրաքանչիւր թաղում հիմնվէին այդ տեսակ դպրոցներ, ցանկալի է որ գոնվէին մեզանում պ. Ռաֆեանեանցի օրինակին հետեւողներ և վերջապէս ցանկալի է որ և անպրկոմկատան միւս քաղաքները հետեւէին թիֆլիսի այդ օրինակին։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

—

Փետրվարի 18-ին

Ուսումնարանական շրջանների հոգաբարձական ժողովի երրորդ նիստը կայացաւ փետրվարի 7-ին։ Այդ նիստում քննութեան ենթարկվեցան այն բոլոր փոփոխութիւնները որոնց մտադրութիւն կայ մացնել այժմեան քննութեանց սիստեմայի ու հաստատութեան առանձնատուի մէջ։

Այժմեան քննութեանց սիստեման, մանկավարժական խորհուրդների մեծամասնութեան կարծիքով, աշակերտաց ստուգիկ ճնշում է ու գժուարացնում։ Այդ ճնշումը Հասկանալի է լինում IV և VI դասատանց աշակերտների համար, ըստ որում նրանցից պահանջվում է հաշիւ— առաջիններից շորս, իսկ երկրորդներից երկու տարի։ Այդ դասատանց աշակերտները տարուայ վերջում կրում են մի անասելի գժուարութիւն, այն է պիտի պատրաստվեն քննութեանց համար այն ժամանակ, երբ նրանց ոյժերը դասական պարապմունքներից բաւականին թուլացած են։ Այն ինչ կարելի է բոլորովին և չը գիմել այդ քննութեանց, ըստ որում ուսուցիչները տարվայ ընթացքում աշակերտաց բնաւորութեան ու դրաւոր աշխատանքներից կարող են կազմել իրանց համար կանոնաւոր հասկացողութիւն թէ արժանի է արդեօք այս կամ այն աշակերտը դասատուն փոխելու — թէ ոչ։ Վերջապէս թուանշանների սիստեման, որ այժմ քննութեանց ժամանակ գործադրվում է, պիտի բոլորովին փոփոխվի. մի և նոյն ժամանակ ցանկալի է. որ դրա մէջ մանկավարժական խորհուրդներին տրուի լայն ազատութիւն։ Բացի դրանից, մանկավարժական խորհուրդները ենթադրում են— 1) խափանել առարկաների բաժանումը գլխաւորների և երկրորդականների, և ընդհանրապէս տարուայ ընթացքում, նոյնպէս և քննութեանց ժամանակ բոլոր առարկաներից պահանջել միապաղաղ բաւարարացուցիչ գիտութիւններ. 2) հաստատութեան առանձնատուի համար քննվողներ, եթէ քննութեանց ժամանակ գրաւոր աշխատանքից առանձն անբաւարար թուանշան — թոյլ տրվին բերանացի քննութեան. 3) ի դէպս հիւանդութեան կամ որ և իցէ յարգելի պատճառների թոյլ տալ աշակերտներին ձեռք դասատանը և երրորդ տարին. 4) քննութեանը թոյլ տալու ժամանակ մանկավարժական խորհուրդներին իրաւունք տալ, որ նրանք ընդհանրապէս գնահատեն աշակերտին ոչ թէ թուանշանների հիման վրա, այլ և այդ դէպքում ձեռնարկ ունենան խորհրդի համագումարը. 5) մանկավարժական խորհուրդներին տալ իրաւունք, որ նրանք արձակութիւններից յետ լրացուցիչ քննութիւններ կազմեն այն առարկաներից, որոնց մէջ աշակերտաց յաջողագիտութիւնը քննութեանց ժամանակ անբաւարար է երեւցել. 6) բոլոր դասատներում մինչև VIII դասատուն բերանացի ու գրաւոր քննութիւնները փոխարինել բէպետիցիաներով. 7) եթէ քննութիւններ լինելու լինեն, այն ժամանակ V և VI դասատան աշակերտներին բոլորին ենթարկել քննութեան առանց բացառութեան և պահանջել այն միայն, ինչ որ անցել են մի տարուայ ընթացքում։

Հաստատութեան առանձնատուի քննութեանց ժամանակ կանոնաւոր ու հանգամանաւէն տեղեկութիւններ պահանջել VIII դասատան կուրսի իւրաքանչիւր առարկայից, իսկ միւս դասատանց կուրսերից պահանջել միայն այն, ինչ որ նշանաւորն է ու գլխաւորը։ Հաստատութեան առանձնատուի քննութիւն բռնողի համար, եթէ նա որ և իցէ առարկայից կարվել է, կարելի է նշանակել լրացուցիչ քննութիւն երեք կամ չորս ամսից յետոյ. կարելի է թոյլ տալ հաստատութեան քննութեանը և այն աշակերտաց, որոնք վերջին տարուայ ընթացքում իրանց թոյլ բնաւորութեամբ և անտարբերութեամբ զէպի իրանց աշակերտական պարտաւորութիւնները ցոյց են տուել իրանց բարոյական անատութիւնը։ Հաստատութեան առանձնատուի քննութեանը թոյլ տալու ժամանակ ուշադրութիւն չը դարձնել այն կանոնի վրա, որի զօրութեամբ թոյլ չէ տրվում քննութիւն բռնելու այն անձանց, որոնք թոզել ու դուրս են նկել գիմնազիայից, կամ որ և իցէ ուսումնարանից և որոնք չարաշնակելով իրանց ուսումը դադարեցրել, չէին կարող վերջացնել իրանց կատարեալ կուրսը գիմնազիաների համար նշանակած ութ տարուայ ընթացքում։

Փոզովի անդամներից մի քանիսը յայտնել են այն միտքը թէ՝ մանկավարժական խորհուրդները կատարել են իրանց պաշտօնը ու յանձնարարութիւնը և բացարձակ ու մինչև անգամ հիմնապէս ցոյց են տուել այժմեան կրթութեան, ցանկութեան ու միջոցների գործադրվող սիստեմայի թոյլ կողմերը։ Վերանորոգութիւնը անհրաժեշտ է։ Դպրոցի ինքնուրոյն գործողները հասկացել են արմատական փոփոխութեան անհրաժեշտութիւնը այն հայեացքների, որոնք մինչև այժմ ունենալ են դասատիրական նպատակի վրա։ Դպրոցի նշանակութիւնը ու նրա խնդիրը պիտի լինի աշակերտի ընդհանուր զարգացումը, և ոչ թէ կլասիկական լեզուների ուսումնասիրութիւնը։ Այժմեան դպրոցի սիստեմը և արհամարհանք — զէպի նորերին բոլոր ազգութիւնը։ Հիանալի ու լայն պրոգրամներ, փառաւոր քննութիւններ, երեւելի ատենատուներ հաստատութեան համար — ահա մեր ուսման նպատակը. ամենքը գիմում են այդ նպատակին ու նրա մէջ կորչում է կատարեալ ուսումը, զարգացումը ու գիտութիւնը։ Աշակերտաց ընդհանուր բնաւորութիւնն է թշնամութիւն և ատելութիւն զէպի ուսուցիչները։ Աշակերտների գլխի վրա մշտ կախած է դամոկլեսեան սուրը — քննութիւնները, յետոյ ատոմիկ ցանկութիւն շուտով ազատվելու այդ ահարկու օրից, ուստի և գիմում են ամենայն տեսակ խարեբայութիւնների։ Լլ մեր բարոյական զգացմունք պիտի զգայ ուսուցիչը զէպի այն աշակերտները, որոնցից նա իւրաքանչիւր բոպէ խարեբայութիւն է սպասում։ Հասկանալի է, որ այդ զէպքում ուսուցչաց բարոյական ազդեցութիւնը աշակերտաց վրա տեղի չէ կարող ունենալ։ Պահանջները աշակերտից այնքան շատ են, որ նրան կատարել նա չէ կարող, ուստի և նա ամենայն միջոցներով աշխատում է լաւ կերպարանք տալ իր աշխատանքին, քան թէ իսկապէս է։ Դպրոցը պիտի ընդհանուր զարգացում տայ, իսկ զարգացման առաջին հետեւանքն է պարտաւորութեանց ճանաչողութիւնը. այն ինչ աշակերտի վրա բարդվում են այնքան պարտաւորութիւններ, որոնց նա գժուարանում է կատարել և պատճառով ուզղակի կորչում է աշխատանքի ամենամի բարեխղճութիւնը։ Այն ուսումն ու բարձրագոյն գիտութիւնները, որ պահանջվում են աշակերտներից, հիմնաւոր կերպով ձեռք բերել անկարելի է. հարկաւոր է պահանջները փոքրացնել և այն ժամանակ կրթութեան գործը ինքն բան ինքեան յառաջ կերթայ։ Այդ բարձրագոյն գիտութիւնները, որ պահանջվում են աշակերտներից, շուտով կը բթացնեն ու կը ճնշեն գեռ չը զարգացած ու չը հասունացած միտքը, քան թէ նրան կը զարգացնեն։

Ասում են թէ այդ նիստում եղել են և ուրիշ կարծիքներ, թէ չէ հարկաւոր չեղվել համաչխարհային փորձից և հին լեզուները պիտի հիմն համարել գիմնազիական ուսման։ Նոր ուրբաթան ազգերի համար հին լեզուները այնպիսի մի ուժեղ մշակներ են, որոնցով հնչտ կարելի է ծանօթանալ հին պատմութեան և հին փիլիսոփաների ուսման հետ. իսկ մանկավարժական կողմից դրանք ինքնուրոյն աշխատութեան համար աւելի շատ նիւթ են տալիս, քան թէ միւս գիմնազիական առարկաները։ Կարդալով հին հեղինակները աշակերտը ինքնուրոյն կերպով ծանօթանում է մարդկութեան պատմութեան ամբողջ շրջանի հետ, ուստի և նա կարող է կատարեալ կերպով ենթարկվել մեր ինքնուրոյն ու գիտական դատողութեանը։

Բայց թէ ինչ հետեւանքի եկան հոգաբարձները ու խորհրդի անդամները— այդ քաղուում եմ միւս անգամուան։

Ա. Գալաբեան

ԴԱՄԱԿ ՑԱՐՍԿՈՅԷ ՍԵԼՈՅԻՑ

—

Յունվարի 30-ին

Գանի տարի պատերազմից առաջ Ցարսկոյէ Սելոյի հայերը իրանց մէջ ցանկացել են կառուցանելու մեկ փոքրիկ ազօթատուն և այդ նպատակով ժողովել են նուիրատուութեամբ գանագան անձինքներից դրամ։ Բայց յետոյ միտայն յաժարութեամբ, հիմնվելով շատ արժանի ակզբունքների վրա, որոնցից գլխաւորն այս է, թէ Ցարսկոյէ Սելոյի հայերը գլխաւորապէս, սակաւ միայն բացառութեամբ, համարեա ֆաբրիկի առեւտրով պարապողներ են, այդ կառուցանելիք ազօթատան յանախողները ոչինչ է լինելու այդ հայերը, բայց որովհետև կովկասեան երկաթուղին պատրաստվում է արդէն և ոչ շատ հեռու ապագայի մէջ ֆաբրիկի առուտուրը եթէ ոչ հիմնովին, բայց անձեր և արհամարհանք — զէպի նորերին բոլոր ազգութիւնը։ Հիանալի ու լայն պրոգրամներ, փառաւոր քննութիւններ, երեւելի ատենատուներ հաստատութեան համար — ահա մեր ուսման նպատակը. ամենքը գիմում են այդ նպատակին ու նրա մէջ կորչում է կատարեալ ուսումը, զարգացումը ու գիտութիւնը։ Աշակերտաց ընդհանուր բնաւորութիւնն է թշնամութիւն և ատելութիւն զէպի ուսուցիչները։ Աշակերտների գլխի վրա մշտ կախած է դամոկլեսեան սուրը — քննութիւնները, յետոյ ատոմիկ ցանկութիւն շուտով ազատվելու այդ ահարկու օրից, ուստի և գիմում են ամենայն տեսակ խարեբայութիւնների։ Լլ մեր բարոյական զգացմունք պիտի զգայ ուսուցիչը զէպի այն աշակերտները, որոնցից նա իւրաքանչիւր բոպէ խարեբայութիւն է սպասում։ Հասկանալի է, որ այդ զէպքում ուսուցչաց բարոյական ազդեցութիւնը աշակերտաց վրա տեղի չէ կարող ունենալ։ Պահանջները աշակերտից այնքան շատ են, որ նրան կատարել նա չէ կարող, ուստի և նա ամենայն միջոցներով աշխատում է լաւ կերպարանք տալ իր աշխատանքին, քան թէ իսկապէս է։ Դպրոցը պիտի ընդհանուր զարգացում տայ, իսկ զարգացման առաջին հետեւանքն է պարտաւորութեանց ճանաչողութիւնը. այն ինչ աշակերտի վրա բարդվում են այնքան պարտաւորութիւններ, որոնց նա գժուարանում է կատարել և պատճառով ուզղակի կորչում է աշխատանքի ամենամի բարեխղճութիւնը։ Այն ուսումն ու բարձրագոյն գիտութիւնները, որ պահանջվում են աշակերտներից, հիմնաւոր կերպով ձեռք բերել անկարելի է. հարկաւոր է պահանջները փոքրացնել և այն ժամանակ կրթութեան գործը ինքն բան ինքեան յառաջ կերթայ։ Այդ բարձրագոյն գիտութիւնները, որ պահանջվում են աշակերտներից, շուտով կը բթացնեն ու կը ճնշեն գեռ չը զարգացած ու չը հասունացած միտքը, քան թէ նրան կը զարգացնեն։

Ասում են թէ այդ նիստում եղել են և ուրիշ կարծիքներ, թէ չէ հարկաւոր չեղվել համաչխարհային փորձից և հին լեզուները պիտի հիմն համարել գիմնազիական ուսման։ Նոր ուրբաթան ազգերի համար հին լեզուները այնպիսի մի ուժեղ մշակներ են, որոնցով հնչտ կարելի է ծանօթանալ հին պատմութեան և հին փիլիսոփաների ուսման հետ. իսկ մանկավարժական կողմից դրանք ինքնուրոյն աշխատութեան համար աւելի շատ նիւթ են տալիս, քան թէ միւս գիմնազիական առարկաները։ Կարդալով հին հեղինակները աշակերտը ինքնուրոյն կերպով ծանօթանում է մարդկութեան պատմութեան ամբողջ շրջանի հետ, ուստի և նա կարող է կատարեալ կերպով ենթարկվել մեր ինքնուրոյն ու գիտական դատողութեանը։

Բայց թէ ինչ հետեւանքի եկան հոգաբարձները ու խորհրդի անդամները— այդ քաղուում եմ միւս անգամուան։

Ա. Գալաբեան

ԴԱՄԱԿ ՑԱՐԻՑԻՆԻՑ

—

Յունվարի 30-ին

Գանի տարի պատերազմից առաջ Ցարիցինի հայերը իրանց մէջ ցանկացել են կառուցանելու մեկ փոքրիկ ազօթատուն և այդ նպատակով ժողովել են նուիրատուութեամբ գանագան անձինքներից դրամ։ Բայց յետոյ միտայն յաժարութեամբ, հիմնվելով շատ արժանի ակզբունքների վրա, որոնցից գլխաւորն այս է, թէ Ցարիցինի մէջ հայերը գլխաւորապէս, սակաւ միայն բացառութեամբ, համարեա ֆաբրիկի առեւտրով պարապողներ են, այդ կառուցանելիք ազօթատան յանախողները ոչինչ է լինելու այդ հայերը, բայց որովհետև կովկասեան երկաթուղին պատրաստվում է արդէն և ոչ շատ հեռու ապագայի մէջ ֆաբրիկի առուտուրը եթէ ոչ հիմնովին, բայց ան-